



«Իրավաբանական լրատուն» պարբերական է, որը նպաստում է արդի իրավական մշակույթի ձևավորմանը

2006թ. դեկտեմբեր, թիվ 7

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՈՒԺԵՂ, ԻՍԿ ՈՒԺԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԱՐԴԱՐԱՑԻ:

Փաստաբանական գործունեության՝ որպես ձեռնարկատիրական գործունեության առանձին տեսակի զարգացման համար կարևոր նշանակություն ունի նաև փաստաբանական գործունեությունը կարգավորող բարենպաստ հարկային դաշտի առկայությունը: Այս խնդրի լուծման համար, որպես առաջին քայլ անհրաժեշտ է «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություն՝ հնարավորություն տալով փաստաբաններին և փաստաբանական գործունեությամբ զբաղվող իրավաբանական ընկերություններին իրենց գործունեությունը հարկել պարզեցված հարկով՝ տարվա իրացման շրջանառության քսան տոկոսի չափով՝ ինչպես նաև չսահմանափակելով մատուցված փաստաբանական ծառայությունների իրացման շրջանառության ընդհանուր գումարի չափը: Այս ամենը ներկայումս կիրառվում է խորհրդատվական ծառայություններ մատուցող նոտարների գործունեության նկատմամբ և անհասկանալի է, թե ինչու չպետք է կիրառվի նաև փաստաբանական գործունեության նկատմամբ: Հակառակ դեպքում անհասկանալի է դառնում «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքով ամրագրված խտրական մոտեցումը:

Բ. ՊԱՍԿԱԼ



ԼՐԱՅՈՒ

ՀԱՍԱՐԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

Իրավաբանական լրատուն հարցազրույց է անցկացրել ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ Ռուբեն Սահակյանի հետ: Հարցազրույցը՝ էջ 4-5-ում:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

1950 թվականին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի առաջարկով դեկտեմբերի 10-ը հռչակվեց մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օր: Մանրամասները՝ էջ 2-3-ում:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

Նախագահ Ռուբեն Քոչարյանի՝ դեկտեմբերի 29-ի հրամանագրերով Հայաստանի Հանրապետությունում օրինականության և իրավակարգի ամրապնդման գործում ներդրած նշանակալի ավանդի համար ՀՀ գլխավոր դատախազ, արդարադատության պետական խորհրդական Աղվան Հովսեփյանը պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով:

ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆԱԳԻՐՔ

2006թ.-ի դեկտեմբերի 25-ին ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում առաջին ընթերցմամբ ընդունվեց ՀՀ դատական օրենսգրքի նախագիծը: Օրենսգրքի նախագծով նախատեսվում են մի շարք էական փոփոխություններ կատարել դատական համակարգում:

ՓՈՒՍԱՏԵՂՈՒՄՆԵՐ

Նախագահ Ռուբեն Քոչարյանի 2006թ.-ի դեկտեմբերի 27-ի հրամանագրով ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական գործերով պալատի նախագահ Միքե Խաչատրյանը ազատվել է զբաղեցրած պաշտոնից և նշանակվել ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահ: Նույն օրը ՀՀ Նախագահի մեկ այլ հրամանագրով ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահ Տիգրան Սահակյանը ազատվել է իր զբաղեցրած պաշտոնից և նշանակվել ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական գործերով պալատի նախագահ:

ԱՆՆԱԽԱՂԵՊ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական գործերով պալատը 2006թ.-ի դեկտեմբերի 22-ին աննախադեպ որոշում է կայացրել՝ բեկանել է սպանության մեջ մեղադրվող երեք զինծառայողներին՝ Ռ-ազմիկ Սարգսյանին, Մուսա Մերոբյանին և Արայիկ Չալայանին ցմահ ազատազրկման դատապարտող ՀՀ Ջրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավճիռը, և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության: Նույն որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը պահանջել է անհապաղ ազատ արձակել մեղադրյալներին, որոնց մեղքը, ըստ դատարանի, հիմնավորված և ապացուցված չէ: Ի կատարումն ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշման՝ Ռ-ազմիկ Սարգսյանը, Մուսա Մերոբյանը և Արայիկ Չալայանը ազատ են արձակվել:

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԿԱ
56-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ**

1950թ.-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի առաջարկով ղեկտնման 10-ը հռչակվեց մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օր, որն ամբողջ աշխարհում նշվում է գիտաժողովների, համաժողովների, քարոզարշավների, հանդիպումների, ցուցահանդեսների և այլ միջոցառումների միջոցով: 2006թ.-ի ղեկտնման 10-ին նույնպես միջազգային հանրությունը նշեց մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվա 56-րդ տարեկիցը, որի խորագիրն է «Աղքատության հաղթահարումը»:

Իրավաբանական լրատուն, բոլորին շնորհավորելով մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվա 56-րդ տարեկիցի առթիվ, ներկայացնում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և Եվրոպական սոցիալական խարտիայի վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Եվրոպայի խորհրդի կարևորագույն փաստաթղթերից մեկի՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (Կոնվենցիա) համարձակ նորույթն այն էր, որ նա ստեղծեց միջազգային պաշտպանության այնպիսի մի համակարգ, որն առաջին անգամ նախատեսեց մարդու իրավունքների արդյունավետ իրականացումը: Համաձայն 1953թ.-ին ուժի մեջ մտած Կոնվենցիայի՝ մասնակից պետություններն ապահովում են ոչ միայն իրենց քաղաքացիների, այլև «իրենց իրավասության ներքո գտնվող» բոլոր անձանց՝ իրավական պետությանը բնորոշ հիմնական քաղաքացիական և քաղաքական իրավունքները: Պետությունները կամ անհատները կարող են զանգատ ներկայացնել Կոնվենցիայի հիման վրա ստեղծված դատարան: Ընդ որում, անհրաժեշտ չէ, որ Կոնվենցիան լինի յուրաքանչյուր պետության ներքին իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: Այսպիսով՝ գործնականում իրականացվեց միջազգային իրավունքի այն տեսությունը, ըստ որի, մարդու իրավունքներն ունեն հիմնարար բնույթ և ավելի բարձր են դասվում, քան ինքնիշխան պետությունների օրենքները և պրակտիկան:

Երաշխավորվող իրավունքներ

- կյանքի իրավունք,
- ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք,
- քաղաքացիական և քրեական գործերով արդար դատաքննության իրավունք,
- անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք,
- ամուսնության ընթացքում ամուսինների իրավունքների և պատասխանատվության հավասարություն,
- ազատ արտահայտվելու իրավունք (ներառյալ մամուլի ազատությունը),
- խաղաղ հավաքների և միավորման ազատություն,
- սեփական գույքից անարգել օգտվելու իրավունք,
- կրթության իրավունք,
- ազատ ընտրությունների իրավունք,
- տեղաշարժի ազատություն և բնակության վայրի ազատ ընտրություն:

Պաշտպանության մեխանիզմը

Կոնվենցիան իրավական փաստաթուղթ է, որի իրականացումը վերահսկվում է մի դատական մարմնի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից (Դատարան): Դատարանը չի կարող գործել ինքնուրույն նախաձեռնությամբ, այլ միայն անհատի, անհատների խմբի կամ ոչ կառավարական կազմակերպության դիմումի (անհատական դիմում) կամ պետության դիմումի (միջպետական դիմում) հիման վրա: Մարդու



իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարումը վերահսկվում է Նախարարների կոմիտեի կողմից: Կոնվենցիայի թիվ 11 արձանագրությամբ, որը ուժի մեջ մտավ 1998թ.-ի նոյեմբերի 1-ին, երկու սկզբնական վերահսկիչ մարմինների՝ նախկին Հանձնաժողովի և Դատարանի միավորման միջոցով հիմնվեց նոր մշտական Դատարան: Անհատական դիմում ներկայացնելու իրավունքը սկսվեց կիրառվել ավտոմատ կերպով, իսկ Դատարանի իրավասությունը դարձել է պարտադիր բոլոր պայմանավորվող կողմերի համար: Նախարարների կոմիտեն պահպանում է իրեն վերապահված դերը, այսինքն՝ Դատարանի վճիռների կատարման վերահսկումը, բայց այն, ինչպես նախկինում, այլևս պատասխանատու չէ որոշ գործերով որոշում կայացնելու այն մասին, թե Կոնվենցիայի խախտում տեղի է ունեցել, թե ոչ: Այն պետությունը, որի նկատմամբ կայացրած վճիռը բացահայտում է նման խախտում, պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ խախտումն ուղղելու համար: Եթե պետության ներքին օրենսդրությամբ չի նախատեսվում խախտման հետևանքների լիակատար ուղղում, ապա Դատարանը կարող է այդ պետությանը պարտադրել տուժող կողմին վճարել ֆինանսական փոխհատուցում: Ի լրումն՝ պետությունից կարող է պահանջվել, որ նա փոփոխի իր օրենսդրությունը և պրակտիկան՝ ապագայում խախտման և դրա հետևանքների կրկնությունից խուսափելու համար: Նման միջոցների շնորհիվ դատարանի վճիռներն ունենում են փաստացի գործերի սահմաններից ծավալվող ազդեցություն: Դատարանի նախադեպի իրավունքն ունի կանխարգելիչ ազդեցություն՝ Կոնվենցիայի դրույթների խախտումից զերծ պահելով պետական մարմիններին, որոնց սպառնում են հնարավոր միջազգային պատժամիջոցներ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽԱՐՏԻԱ

Եվրոպայի խորհուրդը 1961թ.-ին ընդունեց Եվրոպական սոցիալական խարտիան՝ համոզված լինելով, որ քաղաքացիական և քաղաքական իրավունքները

փոխկապակցված են տնտեսական ու սոցիալական իրավունքների հետ և միասին կազմում են սկզբունքների անբաժանելի մի ամբողջություն, որոնց վրա պետք է հիմնվեն Եվրոպայի ժողովրդավարական պետությունները: Խարտիան ու 1988թ.-ի լրացուցիչ արձանագրությունը երաշխավորում են մի շարք հիմնարար իրավունքներ, որոնց որոշակի նվազագույն թիվը պետք է ընդունվի յուրաքանչյուր պետության կողմից: Իրավունքները բաժանվում են երկու կատեգորիայի՝

- աշխատանքի պայմաններ.
 - աշխատանքի հետ կապված հարցերում խտրականության արգելում,
 - հարկադիր աշխատանքի արգելում,
 - միավորվելու իրավունք, կոլեկտիվ կերպով բանակցելու և պայմանագիր կնքելու իրավունք,
 - աշխատանքի արդարացի պայմաններ և արդար վարձատրության իրավունք՝ ներառյալ տղամարդկանց և կանանց համարժեք աշխատանքի համար հավասար վարձատրության իրավունքը,
 - հաշմանդամների ինտեգրում աշխատանքի մեջ,
 - մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական պատրաստման իրավունք,
 - տասնհինգ տարեկանից փոքր երեխաների աշխատանքի արգելում և տասնհինգ-տասնութ տարեկան երիտասարդների հատուկ պաշտպանություն,
 - մայրության պաշտպանություն,
 - միգրանտ աշխատողների նկատմամբ հավասար վերաբերմունք,

- սոցիալական համախմբվածություն.
 - առողջապահության, սոցիալական ապահովության, բժշկական և սոցիալական օգնություն ստանալու, սոցիալական ծառայություններից օգտվելու իրավունք,
 - ֆիզիկական ու բարոյական վտանգներից երեխաների և երիտասարդների պաշտպանվածության իրավունք,
 - ընտանիքի և ընտանիքի առանձին անդամների իրավական, սոցիալական և տնտեսական պաշտպանվածության իրավունք,
 - միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների պաշտպանվածության և օգնություն ստանալու իրավունք,
 - տարեց մարդկանց պաշտպանվածության իրավունք:

1996թ.-ին ընդունվեց Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան, որը սկզբնական Խարտիայի բովանդակությունը համապատասխանեցրեց այն հիմնարար սոցիալական փոփոխություններին, որոնք տեղի են ունեցել դրա ընդունումից հետո: Նախատեսվում է, որ Վերանայված խարտիան աստիճանաբար կփոխարինի 1961թ.-ի Խարտիային՝ ներմուծելով նոր իրավունքներ, ինչպիսիք են.

- կանանց և տղամարդկանց միջև հավասարության ընդլայնումը,
- հաշմանդամների սոցիալական ինտեգրման և անձնական ինքնավարության իրավունքը,
- երեխաների և երիտասարդների սոցիալական, իրավական և տնտեսական պաշտպանվածության



իրավունքի ամրապնդումը,

- աշխատանքից զրկվելու դեպքում պաշտպանվածության իրավունքը,
- աշխատողների արժանապատվության իրավունքը,
- ընտանեկան պարտականություններ կրող աշխատողների՝ հավասար հնարավորություններ և պայմաններ ունենալու իրավունքը,
- աղքատությունից և սոցիալական բացառումից պաշտպանվածության իրավունքը,
- պատշաճ կացարանի իրավունքը,
- խտրականության ավելի լայն արգելումը:

Խարտիայի իրականացման վերահսկումը

1991թ.-ի արձանագրությամբ փոփոխված վերահսկման մեխանիզմը հիմնված է կառավարությունների կողմից Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեին ներկայացվող՝ Խարտիայի դրույթների կիրառման մասին զեկույցների վրա: 1998թ.-ի հուլիսին ուժի մեջ մտած լրացուցիչ արձանագրությունն ազգային զեկույցներ ներկայացնելու ընթացակարգը լրացրեց կոլեկտիվ գանգատների համակարգով, որը որոշ միություններին, գործատուների կազմակերպություններին և ոչ կառավարական կազմակերպություններին հնարավորություն է ընձեռում Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեին ներկայացնել իրենց պնդումները խախտումների վերաբերյալ:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության ներկայացուցիչ Գևորգ Կոստանյանի՝ 2006թ.-ի հուլիսի 14-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության դեմ ներկայացվել է 330 հայց, որոնցից 146-ը ճանաչվել են անընդունելի, չորսի նկատմամբ գործը կարճվել է: Հայաստանին վերաբերող գործերով ութ որոշում է կայացվել, իսկ վճիռ՝ դեռևս ոչ մի: Հայաստանի հետ կապված գործերով դեռ բանավոր լսում չի եղել: Գործերից 33-ը ՀՀ կառավարության հետ արդեն քննարկվել են, գործադիրը ներկայացրել է պաշտոնական դիրքորոշում, սպառվել է դատարանի ընթացակարգը, և ակնկալվում է, որ 2007թ.-ին որոշում կամ վճիռ կկայացվի:

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԳՐՈՒՄ, ՆԱ ԱՐԴԵՆ ՊԱՐՏԿԵԼ Է

-Պարոն Սահակյան, խնդրում եմ ասել, ներկայումս ընթացող դատավարական բարեփոխումները արդյո՞ք ստեղծել և կամ ստեղծում են նպաստավոր միջավայր ՀՀ-ում արդյունավետ արդարադատություն իրականացնելու համար:

-Դատավարական բարեփոխումները սպասվում էին վաղուց, մասնավորապես, ինչ որ համախոհների շրջանում: Իսկ ստեղծել են արդյոք նրանք նպաստավոր պայմաններ արդարադատության իրականացման համար, այս հարցին միանշանակ չի կարելի պատասխանել, քանի որ առանձին բարեփոխումներ ստեղծել են բարդ իրավիճակ: Մասնավորապես ուզում եմ անդրադառնալ այդ բարեփոխումներից մեկին՝ վճարելի բողոք վարույթ ընդունելու հիմքերին: Հիմքերից մեկն է՝ եթե ստորադաս դատարանի կողմից դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետևանքներ: Այս առումով ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2 և ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 414.2 հոդվածները, արտաքինապես սահմանելով վճարելի բողոքը վարույթ ընդունելու համար անհրաժեշտ պայմանները, իրականում դրանց չեն հաղորդել իրավական որոշակիություն: Օրինակ՝ այդ նորմից դժվար է կռահել, թե ինչ չափանիշներով են որոշվելու ծանր հետևանքները, կամ արդյո՞ք ծանր հետևանքը միայն նյութականացված է: Եթե այո, ապա ի՞նչ չափի վնասի դեպքում այն կհամարվի ծանր և այլն: Օրենքը չի սահմանում՝ ինչ ասել է ծանր հետևանք: Դատարանը նույնպես չի մեկնաբանում, թե ինչ է ծանր հետևանք: Դատարանի անդամները դա չեն կարող ասել, ապա ինչ ասել ենք մենք՝ փաստաբաններս: Փաստաբանը վճարելի բողոք է ներկայացնում դատարան և օրերից մի օր պատասխան է ստանում, որ բողոքը չի համապատասխանում օրենքի պահանջներին: Փաստաբանը չի իմանում ինչ պատճառով չընդունվեց իր բողոքը, և ինչու թույլ տրված դատական սխալը չի կարող առաջացնել ծանր հետևանք: Դատարանը իր որոշումը չի պատճառաբանում: Վճարելի դատարանի անդամները ասում են, որ մենք չպետք է պատճառաբանենք, թե ինչու բողոքը չի ընդունվում, մինչդեռ համընդհանուր սկզբունք է, որ դատարանի որոշումները պետք է պատճառաբանված լինեն:

Բարեփոխումների առաջացրած այս հորձանուտում մենք չենք կարող հասկանալ՝ որն է ճիշտ, որն է սխալ: Արդյունքում մեծանում է սուրյնելիով մոտեցման և շարաշահումների հնարավորությունը, այսինքն՝ ստեղծվել է կոռուպցիայի նոր հնարավորություն: Այս ամենով հանդերձ ես կողմնակից եմ բարեփոխումներին: Համոզված եմ, որ բարեփոխումների արդյունքն էր օրենք Վճարելի դատարանի կողմից կայացված որոշումը Մատաղիսի սպանության գործով:

Այս գործը մեծ իրարանցում է առաջ բերել հանրապետությունում, առկա է տարակարծություն: Բայց ինձ համար մի դրական բան կա: Ինչպես Գորբաչովը ժամանակին ասաց՝ գործընթացը սկսվեց: Վճարելի դատարանը գտավ իր մեջ ուժ՝ կայացնելու արդարացի որոշում: Եվ այստեղ դատախազությունը, դատավճիռ կայացրած առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները պետք է լուրջ հետևություններ անեն: Այս գործի քննության ընթացքում ստորադաս դատարանների կողմից թույլ են տրվել օրենքի բազմաթիվ կոպիտ խախտումներ: Նշեմ մի քանիսը. դատարանը հրապարակում է փորձագետի եզրակացությունը, այդ պահին փաստաբանը ասում է՝ առարկում եմ: Միտքը նախագահող դատավորը ասում է՝ մտքեք, թույլություն վերցրեք՝ նոր առարկեք: Սակայն եթե փաստաբանն ասում է՝ առարկում եմ, նշանակում է նա թույլություն է ուզում: Դատարանը գրկում է փաստաբանին փորձագետի եզրակացությունը պարզելու համար հարցեր ուղղել փորձագետին: Երբ նախագահողի կամայական գործողություններից մեկի ժամանակ դահլիճից մեկը գոռում է՝ ինչ է, Պինդչեան ե՞ք, որ այսպիսի բան եք անում, նախագահողը կարգը խախտողի նկատմամբ համապատասխան միջոց կիրառելու փոխարեն պատասխանում է՝ այո՝ Պինդչեան եմ: Խոսքը ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր Ադրամանյանի մասին է: Ինչ է, նա չի՞ ծանոթացել Քրեական դատավարության օրենսգրքին: Եթե ծանոթացել է, ապա ինչու է փաստաբանին գրկում իր իրավունքներից: Այս գործով դատական սխալի ուղղումը համոզմունք է առաջացրել, որ Վճարելի դատարանի որոշումները մեծ դեր են ունենալու այսուհետ:

Նախադեպային գործընթացը, որ սկսվելու է եկող տարվանից ավելի լայն թափով, մեծ փոփոխություններ է բերելու, որոնք շատերի համար ընդունելի չեն, սակայն ինձ համար ընդունելի են: Եկեք սկսենք այսօր, որպեսզի վաղը հասնենք մի հանգրվանի, որի մասին երազում ենք: Օրինակ՝ Քրեական դատավարության օրենսգրքի փոփոխություններով այժմ մենք խնդիր չունենք փաստաբանի և վստահորդի, մեղադրյալի, կասկածյալի տեսակցության հարցում: Կամ սպայադրի օգտագործման անթույլատրելիության



հարցերը: Այս տեսակետից ես ողջունում եմ բարեփոխումները, և գտնում եմ, որ եթե այն մենք սկսեինք 15 տարի առաջ, ապա մի դրական հանգրվանի արդեն հասած կլինեինք:

-Արդեն մոտ երկու տարի է, ինչ կազմավորվել է ՀՀ Փաստաբանների պալատը: Խնդրում եմ հակիրճ ներկայացնել այս ժամանակահատվածի ընթացքում Փաստաբանների պալատի հիմնական ձեռքբերումները:

-Դեռևս երկու տարի չէ, ընդամենը մեկ տարի երկու ամիս է: Մենք արդեն անցկացրել ենք որակավորման քննություններ՝ բավականին բարձր մակարդակով: Առաջին անգամն էր, որ քննություններն անցկացվեցին պալատի ուժերով: Անցկացրինք բացարձակ թափանցիկության պայմաններում: Բնական է կային թերություններ: Ամեն մի նոր գործընթաց ունի թերություններ: Քննություններն անցկացվեցին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Ամերիկայի իրավաբանների ընկերակցության աջակցությամբ: Քննություններում բացառվեցին կոռուպցիայի և հովանավորչության հնարավոր երևույթները: Դա ասում են նաև որակավորման քննությունները չանցած հավակնորդները: Սա ես համարում եմ լուրջ ձեռքբերում՝ չնայած դեռ բավականին աշխատանք ունենք կատարելու նկատված թերությունների շտկման առումով: Երեկ հանդիպում ունեցա Ամերիկայի իրավաբանների ընկերակցության ներկայացուցիչների հետ, պայմանավորվեցինք, որ հունվարի 8-ին եռակողմ հանդիպում ունենանք, որպեսզի բոլոր թերությունները թրջին տանք և մինչև երկրորդ քննությունները դրանք վերացնենք:

Նախկինում անվճար իրավաբանական օգնությունն իրականացվում էր, այսպես ասած, պետապաշտպանությանը, որը տարբերակներ էր իրականացվում: Այսօր դրա փոխարեն օրենքով ամրագրված է հանրային պաշտպանի գրասենյակի ինստիտուտը, որը կամաց-կամաց ոտքի է կանգնում: Հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբաններին մենք քննարկեցինք մրցութային կարգով: 2005թ. դեկտեմբեր ամսին անցկացրեցինք մրցույթ, փորձեցինք ընտրել դիտողներից լավագույններին: Սա նույնպես ձեռքբերում է: Քանի որ աշխատավարձը ցածր է, ինչպես և ամբողջ աշխարհում, մեր լավագույն փաստաբանները չեն ցանկանում զնալ հանրային պաշտպանությանը զբաղվել: Եկող տարի կանցկացնենք մոնիթորինգ և կփորձենք հասարակությունից ճշտել, թե որքանով է կայացել հանրային պաշտպանի գրասենյակը:

Այս կարճ ժամանակահատվածում մենք ձեռնամուխ եղանք նաև Փաստաբանների պալատի առաջիկա հինգ տարվա ռազմավարական պլանի մշակման գործին: Այս հարցում մեզ աջակցեց Բաց հասարակության ինստիտուտը: Մենք բազմաթիվ հանդիպումներ ենք ունեցել ՀԿ-ների, դատախազության,

դատարանների, այլ կազմակերպությունների հետ, մոտ 100 փաստաբան ներգրավված է եղել այս գործընթացում: Հիմնական աշխատանքները արդեն ավարտված են, հույս ունենք, որ փետրվարին կվերջացնենք գործընթացը, որից հետո կսկսվի հիմնական աշխատանքը:

Ես համարում եմ ձեռքբերում ևս մեկ բան: ՓՄՄ-ում մենք ամեն շաբաթ ուսուցումներ էինք անում, նույնը շարունակեցինք անել, երբ ՓՄՄ-ն և ՀՓՄՄ-ն միացան: ՀՀ ՓՄ-ում դրամաշնորհի շրջանակներում մի անգամ արվել է նման բան, և վերջ: Իսկ մենք մեկ տարվա ընթացքում անցկացրել ենք այնքան, որքան վերջին 7 տարիների ընթացքում միասին: Այս ամենը իհարկե Ամերիկայի իրավաբանների ընկերակցության և ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակի աջակցությամբ, բանի որ դրսից մասնագետ բերելը թանկ հաճույք է: Փաստաբանները պարտավոր են սովորել փոփոխվող օրենքները:

-Որո՞ւնք են փաստաբանության առջև կանգնած և հրատապ լուծումներ պահանջող հիմնական խնդիրները:

-Ամենամեծ խնդիրը փաստաբանների գիտելիքների ցածր մակարդակն է: Գիտելիքներով սնանկ փաստաբանը չարիք է իր վստահողների համար, իր շրջապատի, կուեզանների, դատարանի համար: Պատկերացրեք փաստաբանի գիտելիքների պատճառով վստահողը կորցնում է բնակարանը, սա չարիք է՞: Սա հրամայական խնդիր է, որը պետք է լուծենք: Յուրաքանչյուր փաստաբան պետք է ստանա որոշակի ժամաքանակով դասընթացներ օրենքի փոփոխությունների կամ փաստաբանական հմտությունների առումով: Փաստաբանների հեղինակության բարձրացման խնդիրը ևս առաջնահերթություն է: Հենց գիտելիքների պակասը բերել է նրան, որ փաստաբանը պահանջված չէ: Սակայն դա պայմանավորված է նաև դատաիրավական համակարգի արատներով, որ տասնամյակներ շարունակ եղել են խորհրդային տարիներից, այսօր դեռ կան և դեռևս կշարունակվեն: Ժողովրդի մոտ կա այսպիսի մի մտտեցում. ավելի լավ չէ՞ գումարը տանել տալ քննիչին, դատավորին, դատախազին և ստանալ ցանկալի արդյունք, քան տալ փաստաբանին, որը ոչինչ չի կարող անել, ու հետո պետք է նորից այնտեղ տանք: Սա պետք է հաղթահարել, որի համար հարկավոր են լուրջ դատաիրավական բարեփոխումներ, հասարակության լուրջ աշխատանք, ՀԿ-ների հետ համատեղ աշխատանք համակարգի բերությունները վեր հանելու համար, չվարանել և անուններ շեշտել, որ այս կամ այն քննիչը, դատավորը այսինչ սխալն արեց: Այդպիսի սխալների մի մասը ես հանցագործություն եմ համարում: Անհրաժեշտ է ժողովրդի տարրական իրավական գիտելիքների քարոզչություն, իրավագիտակցության բարձրացում: Եթե քաղաքացին չգիտի իր իրավունքները, նա արդեն պարտվել է, մինչ փաստաբանին դիմելը կատարում է գործողություններ, որ երբեմն անդառնալի են դառնում: Փաստաբանական շուկայի ձևավորումը նույնպես խնդիր է: Խնդիրներ շատ կան:

-Ըստ Ձեզ, ինչու՞ փաստաբանները դատավորների պես ունեն կորպորատիվ շահի միասնական ընկալում և ինչու՞ չեն մտքի/կցցում/իրենց ներսուզի հանուն հզոր ու անկախ փաստաբանական ինստիտուտի:

-Այդ ամենին խանգարում է փաստաբանի նյութական վիճակը: Կա տարածված բայց սխալ կարծիք, որ փաստաբանը բարձր է վարձատրվում: Կա մի փոքր խումբ, որոնք բարձր են վարձատրվում, սակայն համարժեք աշխատանքի համար: Ճնշող մեծամասնությունը չունի այդ հնարավորությունը: Ինքը՝ ազգաբնակչությունը, չունի հնարավորություն վճարելու, և փաստաբանը սկսում է գործ փնտրել, որ ընտանիքը պահի: Այստեղ կորպորատիվ շահի մասին արդեն խոսք լինել չի կարող: Եվ շատ անգամ կտեսնեք դատարանում, որ երբ գրագետ փաստաբանը ինչ-որ միջնորդություն է ներկայացնում, մյուսը, որ արդեն մի քանի կուպեկ է վերցրել, հակառակվում է, բայց ոչ օրենքի շրջանակներում, որպեսզի վստահողի սպասելիքներն արդարացնի: Հակառակվելով իր կուեզային չի պատճառաբանում, թե, օրինակ, ինչու է նրա միջնորդությունն անհիմն և հանիրավի առաջարկում է մերժել այն: Այսինքն՝ մինչև ժողովրդի սոցիալական վիճակը չարվանա, այս խնդիրները չեն լուծվի: Իսկ դատաբանը կուռ մարմին թվում է առաջին հայացքից, դա կուռ մարմին չէ:

-Ձեզ, որպես Փաստաբանների պայատի ղեկավարի, այսօր քայլարարո՞ւմ է փաստաբանների պրոֆեստնայ ու բարոյական որակները, և այս առումով առաջինկայում ի՞նչ եք պատրաստվում ձեռնարկել:

-Լավ փաստաբանների պրոֆեստնայ և բարոյական վիճակը բավարարում է այնքանով, որքանով կա, իսկ այն, ինչ վատ է, ես գիտեմ, գիտեմ ով ինչ գիտելիքներ ունի: Ոչ

100%-ով իհարկե: Իմ ժամանակի մեծ մասը ծախսվում է փաստաբաններին ընդունելու վրա, չէ՞ որ պալատում չկա այլ մարմին, որի հետ փաստաբանը կիսվի իր պրոբլեմով:

Փաստաբանը մշտապես պետք է աշխատի իր գիտելիքների վրա: Մենք փաստաբաններին նախագուշակում ենք ժամանակն է աշխատել ձեր գիտելիքների վրա, անհրաժեշտ է, որ ծանոթ լինեք դատաիրավական բոլոր բարեփոխումներին: Սպասվող դատաիրավական փոփոխությունները բավականին տարբերակելու են առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանի կողմից գործի քննության սահմանները: Առաջին ատյանում դրական արդյունքի չհասաք՝ վերաքննիչում իրավունք չեք ունենա ներկայացնել ձեր փաստարկները, վերաքննիչ դատարանն իր իրավասության սահմանում վերանայելու է առաջին ատյանի դատարանների գործն ըստ էության լուծող դատական ակտերը, առաջվա նման գործի փաստական հանգամանքները չի հետազոտելու, ապացույցները չի հետազոտելու: Վճռաբեկ դատարանում էլ բողոքը կընդունվի կամ չի ընդունվի՝ դա էլ հարց է: Եվ այստեղ կարող է պարզ դառնալ, որ փաստաբանի մեղքով է սխալը եղել, վստահողը կբարձրաձայնի դա: Մեկ, երկու այդպիսի դեպք, և այդ փաստաբանի մոտ մարդիկ չեն գնա:

-Եվ վերջին հարցը. ՀՀ Դատական ղեկավարամեծնախ որոշմամբ դատարանների շենքերում իրենց գործունեությունը ծավալող փաստաբանները դուրս են հրավիրվում դատարանների տարածքներից: Խնդրում ենք նաև կապակցությամբ հայտնել Ձեր դիրքորոշումը:

-Ես կողմնակից չեմ, որ փաստաբանները տարածք ունենան դատարանների շենքերում: Կողմնակից չեմ մի պարզ պատճառով: Փաստաբանը, մոտիկ լինելով կամ դատարանի շենքին, կամ լինելով այդ շենքում, կամա թե ակամա անընդհատ շփվում է դատավորի հետ: Այնպիսիքներ է ունենում նրանից, որպեսզի ունենա վստահողներ: Եվ եթե դատավորն է նրան գործ տալիս, ապա այստեղ արդարադատության մասին խոսք լինել չի կարող: Փաստաբանը չի կարող այն օբյեկտիվությամբ, սկզբունքայնությամբ, հետևողականությամբ զբաղվել գործով, որն իրեն տվել է դատավորը, քննիչը, դատախազը: Կաշկանդվածություն է առաջանում, մտածում է՝ եթե ես այստեղ ակտիվ լինեմ, վաղը դատարանն նախագահը ինձ կարող է դուրս հանել շենքից: Այդ պատճառով իր գործողությունները փորձում է այնպես չափավորել, որ չհայտնվի փողոցում: Այս տեսակետից փաստաբանը դավաճանում է իր սկզբունքներին: Բացի այդ՝ ամբողջ աշխարհում ընդունված է, որ եթե դու փաստաբան ես, դու պետք է ունենաս գրասենյակ, չէ՞ որ դու ձեռներեց ես, գումար ես վստահում, ինչու՞ քեզ պետք է պետությունը տարածքներ տրամադրի: Գտնում եմ, որ շատ ճիշտ որոշում էր, որ փաստաբանները դուրս գան դատարանների շենքերից: Սակայն այստեղ մի խնդիր էլ կա: Տարիներ շարունակ փաստաբանները գտնվել են հետին պլանում և արդարադատության իրականացման գործընթացում որևէ դեր չեն ունեցել: Բայց ժամանակները փոխվեցին. այսօր մենք ասում ենք, որ փաստաբանը դատավարության լիարժեք մասնակից է, ունի հավասար իրավունքներ մյուս մասնակիցների հետ: Պետությունը բոլոր հնարավորությունները ստեղծել է և շարունակում է տրամադրել դատարանին, քննիչին, դատախազությանը, նրանք ունեն այն ամենը, ինչ անհրաժեշտ է: Ես կարծում եմ, որ պետությունը ինչ-որ տեղ պետք է աջակցություն ցույց տար փաստաբաններին, որպեսզի փաստաբանությունը ոտքի կանգնեք և դառնար լիիրավ դատավարության մասնակից: Այստեղ, կարծում եմ, կարևոր դեր պետք է ունենար նաև ՀՀ Նախագահը, որը ի պաշտոնե դատական իշխանության երաշխավորն է: Օգտվելով առիթից՝ ուզում եմ նաև շնորհավորել ձեր պարբերականի ընթերցողներին: Պարբերականը ինձ շատ է դուր եկել, անգամ վերջին էջում գտել եմ մի բան, որ վրիպել էր պալատի խորհրդի ուշադրությունից, և, շնորհիվ ձեզ, ուղղում մտքեցի՛նք ընդունված փաստաբաններից մեկում: Ողջունում եմ իրավաբանական լրատուն, նրա ստեղծողներին, կազմակերպիչներին: Ուզում եմ շնորհավորել ինչպես Ձեր կուեզակի, այնպես էլ բոլոր փաստաբանների Ամանորն ու Մուրը ծնունդը, ցանկանալ, որպեսզի իրականացան պալատի ռազմավարական պլանում նախատեսված կետերը՝ այն ժամանակացույցին համապատասխան, որը կներկայացնենք հանրությանը երկող տարվա սկզբին:

ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔԻ ԱՊԱՆՈՎՈՒՄԸ ԸՆՈՒՄ

ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների և ազատությունների ամենահուսալի և արդյունավետ պաշտպանության մեխանիզմը դատական պաշտպանության մեխանիզմն է: ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»: Ինչպես արդեն բազմիցս նշվել և հաստատվել է պրակտիկայով՝ դժվար չէ հայտարարել քաղաքացիների մոտ իրավունքների և ազատությունների առկայության մասին, բայց հաճախ դա գրեթե ոչինչ չի տալիս: **Անհրաժեշտ է ապահովել դրանց ռեալ իրականացումը:** Այս իմաստով արդարության պահանջներին համապատասխանող արդարադատության մատչելիության ապահովումը կարող է շատ ավելին տալ, քան ցանկացած հռչակագիր, այն պարտադիր պայմանով, որ դատարանների վճիռներն ի կատար են ածվում:

Բայց ամենալայն իմաստով իրավական պաշտպանության միջոցը իրավունքում նշանակում է որևէ իրավունքի հաստատման միջոց: Այս սկզբունքը հաճախ ձևակերպվում է հետևյալ կերպ՝ «չկա իրավունք առանց իրավական պաշտպանության միջոցի», կամ՝ «երբ կա իրավական պաշտպանության միջոց, ապա կա նաև ինչ-որ իրավունք»: ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ» ձևակերպումը ենթադրում է ազգային մակարդակում բավականաչափ ծանրակշիռ և հաստատուն երաշխիքների գոյություն, որոնք իրական հնարավորություն են ստեղծում բողոքարկելու հանրային իշխանությունների ենթադրյալ անիրավաչափ գործողություններն ու որոշումները և երաշխավորում են անհրաժեշտության դեպքում դատական ատյաններին դիմելու իրավունքը: Հետևաբար, օրենքում չի կարող որևէ բացառություն նախատեսվել դատական իրավասությունից, կամ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները խախտող գործողությունների ու որոշումների դեմ բողոքների քննությունը չի կարող վերապահվել ոչ դատական մարմինների բացառիկ իրավասությանը: ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը նախատեսում է իրավունքների խախտումներից արդյունավետ պաշտպանության հնարավորություն՝ իրավասու ազգային մարմիններին դիմելու ճանապարհով: Դատարանի մատչելիության իրավունքի խախտման հետ կապված կարևորագույն հարցերից մեկն այն է, որ պետությունն իրավունք չունի սահմանափակելու կամ վերացնելու դատական հսկողությունը գործունեության առանձին բնագավառներում կամ առանձին կատեգորիայի անձանց վերաբերմամբ: Դատարանի մատչելիության իրավունքի խախտման դեպքում խաղաքարտի վրա է դրվում ժողովրդավարական պետությունում դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահությունը:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Սահմանադրական այս դրույթին համապատասխան՝ գործեր քննելիս պետք է զնահատել դատարանի կողմից քննվող իրավահարաբերությունը կարգավորող օրենքի կամ այլ նորմատիվ ակտի բովանդակությունը և բոլոր անհրաժեշտ դեպքերում կիրառել ՀՀ Սահմանադրությունը՝ որպես անմիջական գործողության ակտ: Դատարանը, լուծելով գործը, պարտավոր է անմիջականորեն կիրառել Սահմանադրությունը, մասնավորապես, երբ Սահմանադրության նորմով ամրագրված դրույթները, ելնելով դրա իմաստից, չեն պահանջում լրացուցիչ կանոնակարգում և չեն պայմանավորում դրա կիրառման հնարավորությունը մարդու և քաղաքացու իրավունքները, ազատությունները, պարտականությունները կարգավորող օրենքի ընդունմամբ, և, հատկապես, երբ դատարանը կգա այն համոզման, որ օրենքը հակասության մեջ է գտնվում Սահմանադրության համապատասխան դրույթների հետ: Հետևաբար, դատարանները պարտավոր են Սահմանադրությամբ իրենց իրավասությանը վերապահված



հարցերի վերաբերյալ բոլոր դիմումներն ընդունել վարույթ և քննել դրանք՝ ապահովելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 6-րդ հոդվածի 1-ին մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի անմիջական գործողությունը:

Բացի այդ՝ դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է ելնեն այն սկզբունքից, որ միջազգային պայմանագրերում ամրագրված միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներն ու նորմերը և ՀՀ միջազգային պայմանագրերը, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան, ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Այդ նույն սահմանադրական նորմով սահմանված է, որ եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը: Հաշվի առնելով այս ամենը՝ դատարանը գործի քննության ժամանակ իրավունք չունի կիրառել ծագած իրավահարաբերությունները կարգավորող օրենքի նորմերը, եթե ՀՀ-ի համար ուժի մեջ մտած միջազգային պայմանագրով սահմանված են այլ կանոններ, քան նախատեսված են օրենքով: Նման դեպքերում կիրառվում են ՀՀ միջազգային պայմանագրի կանոնները: Ընդ որում՝ դատարանները պետք է նկատի ունենան, որ «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով միջազգային պայմանագրի նորմերը ՀՀ տարածքում գործում են անմիջականորեն, եթե պայմանագրով նախատեսված չէ ՀՀ ներպետական ակտի ընդունում, կամ եթե վերջինիս ընդունումը չի բխում այդ պայմանագրի պատշաճ կատարումն ապահովելու անհրաժեշտությունից:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով նախատեսված իրավունքը Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանական հետևանքն է, որը պետության վրա պարտավորություն է դնում ապահովելու մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Այդ իրավունքների և ազատությունների հաստատման համար իրավական պաշտպանության միջոցներ տրամադրելը կարելի է դիտել իբրև այդ պարտավորության մի մաս: Միևնույն ժամանակ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը որոշող մյուս կարևոր սկզբունքն այն է, որ այս կամ այն դատական ատյանի մատչելիությունը պետք է լինի ոչ միայն ձևական, այլ նաև իրական:

ԳՈՒ ԸՆԿՐԱՆՆՄԱՆ

ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակից, առաջատար մասնագետ

ՂԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔԻ ԱՊԱՆՈՎՈՒՄԸ ԸՆԴՈՒՄ

ՏԳԻՄԱՊՏ



20-րդ դարի 60-70-ական թվականներին աշխարհի պետությունների մեծ մասում ուղղիչ հիմնարկների գերբնակեցումը խթան հանդիսացավ պատժի համակարգի բարեփոխման, մասնավորապես, ազատազրկմանը այլընտրանք հանդիսացող պատժատեսակների համակարգի արդյունավետ ներդրման համար: Այդ ուղղությամբ առաջին քայլերը կատարեցին Արևմտյան Եվրոպայի երկրները և ԱՄՆ-ը, իսկ 90-ական թվականների սկզբներից այդ շարժումը թափ ստացավ նաև Արևելյան Եվրոպայի երկրներում, այդ թվում ԽՍՀՄ-ի փլուզման արդյունքում ձևավորված նորանկախ պետություններում:

ՀՀ-ն ևս անմասն չմնաց այդ գործընթացին: 2003թ.-ի օգոստոսի 1-ից գործողության մեջ մտավ ՀՀ քրեական նոր օրենսգրքը, որով փոփոխության ենթարկվեց նաև պատժի համակարգը: Մակայն պատժի համակարգում նախատեսվեց ազատազրկման ընդամենը մեկ այլընտրանքային պատժատեսակ՝ հանրային աշխատանքները: Մասնավորապես գործող քրեական օրենսգրքի հոդված 54-ով սահմանվեց, որ հանրային աշխատանքները դատարանի կողմից նշանակված, իրավասու մարմնի կողմից որոշված վայրում չվարձատրվող, դատապարտյալի կողմից հանրության համար օգտակար աշխատանքների կատարումն է: Հանրային աշխատանքները նշանակվում են որպես որոշակի ժամկետով ազատազրկման այլընտրանքային պատժատեսակ՝ ուժի մեջ մտած դատավճիռն ի կատար ածելու կարգադրությունը ստանալուց հետո՝ քսանօրյա ժամկետում՝ դատապարտյալի գրավոր դիմում ներկայացնելու, ինչպես նաև քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված դեպքերում: Այս պատժատեսակի առանձնահատկությունն այն է, որ հանրային աշխատանքները ուղղակիորեն նախատեսված չեն քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածների սանկցիաներում, այլ դրանք՝ որպես հիմնական պատժատեսակ, կիրառվում են ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած, առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ:

Հարկ է նշել, որ մեր իրականության համար նոր այս պատժատեսակը բավականին մեծ արդյունավետությամբ կիրառվում է ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Անգլիայում, Շվեդիայում և այլ երկրներում: Այս պատժատեսակի առավելությունն այն է, որ հանրային աշխատանքների դատապարտված անձը, չխուսափելով պատժից, միաժամանակ չի հեռացվում իր ընտանիքից, միկրոմիջավայրից, պահպանում է աշխատանքը, խուսափում սոցիալական օտարացման երևույթից, ուղղիչ հիմնարկի՝ հաճախ կործանարար ազդեցությունից: Մակայն, ցավոք, Հայաստանում հանրային աշխատանքները դեռևս արդյունավետ համարվել չեն կարող: 2003թ.-ի օգոստոսի 1-ից 2006թ. դեկտեմբերին ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում գրանցվել են հանրային աշխատանքների կիրառման մոտ երեք տասնյակ դեպքեր, բայց դրանք բոլորն էլ վերաբերել են այն իրավիճակներին, երբ տուգանքը վճարելու անհնարինության դեպքում դատարանը տուգանքը կամ դրա չվճարված մասը փոխարինել է հանրային աշխատանքներով: Առաջօր չի գրանցվել մի դեպք, երբ հանրային աշխատանքները կիրառվել են ազատազրկման դատապարտված անձի խնդրանքով՝ որպես ազատազրկման այլընտրանք:

Նման վիճակը, բնականաբար, պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Այդ գործոնների թվին են դասվում թե՛ դատապարտյալների աշխատանքը օգտագործել ցանկացող գործառույթների սակավությունը, թե՛ հանրային աշխատանքների կիրառումն ապահովող հստակ գործող մեխանիզմի բացակայությունը, թե՛ դատապարտյալների՝ ազգային մենթալիտետով պայմանավորված անհանդուրժողականությունը ներգրավվելու հանրային աշխատանքների կատարմանը, թե՛ մտավախությունը, որ այս պատժատեսակի կիրառումը կարող է նոր հորիզոններ բացել կոռուպցիայի ծաղկման համար և այլն: Այս ամենին գումարվում է նաև օրենսդրական մակարդակով մի շարք բացերի առկայությունը: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 54-ում հստակ սահմանված է այն անձանց շրջանակը, ում նկատմամբ հանրային աշխատանքները կիրառվել չեն կարող: Այդ անձանց թվին են դասվում առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդան ճանաչված, դատավճիռ կայացնելու պահին 16 տարին չլրացած, կենսաբոջակային տարիք ունեցող անձինք, հղի կանայք, ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողները: Մակայն օրենսդիրը չի սահմանել, թե՛ ինչպես պետք է հարցը կարգավորվի այն դեպքերում, երբ, օրինակ, հանրային աշխատանքները նշանակվել են հաշմանդանություն չունեցող անձի նկատմամբ, սակայն պատժի կրման ընթացքում նրա մոտ առաջացել է առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդանություն: Ներկայիս օրենսդրական ձևակերպման համաձայն՝ նման

իրավիճակի առկայության պարագայում դատարանը հնարավորություն չունի հանրային աշխատանքները փոխարինելու որևէ այլ պատժատեսակով, ուստի դատապարտյալին պետք է ազատի պատժի կրումից, ինչը, իմ կարծիքով, ոչ միշտ է արդարացված:

Օրենսդրական որոշ բացեր են առկա նաև ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված, ազատազրկման հետ չկապված այնպիսի պատժատեսակների կիրառման առումով, ինչպիսիք են, օրինակ, տուգանքը, կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելը: Ի դեպ, հիշյալ պատժատեսակները հաճախ հանդես են գալիս այլընտրանքային սանկցիաներում՝ որպես ազատազրկման այլընտրանք: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 51-ի համաձայն՝ տուգանքը դրամական տուժանք է, որը նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար՝ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում և սահմաններում՝ պատիժ նշանակելու պահին ՀՀ-ում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հազարապատիկի չափով: Միաժամանակ, օրենսդիրը սահմանում է, որ տուգանքը վճարելու անհնարինության դեպքում դատարանը տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինում է հանրային աշխատանքներով՝ հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց: Մակայն օրենսդրի կողմից կանոնակարգված չէ, թե՛ ինչպես վարվել այն իրավիճակներում, երբ տուգանքի վճարումից խուսափում է այն անձը, ում հանդեպ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 54-ի համաձայն, հանրային աշխատանքներ կիրառվել չեն կարող:

Օրենսդրական կարգավորում չի ստացել նաև այն իրավիճակը, երբ որոշակի գործունեությամբ զբաղվելու կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկված դատապարտյալը չարամտորեն խուսափում է իր պատժատեսակի պահանջների կատարումից: Ենթադրվում է, որ պահանջների չկատարումը պետք է առաջացնի որոշակի բացասական հետևանքներ, սակայն օրենսդրական որևէ դրույթ այդ առումով առկա չէ: Կարծում են, որ այս բացերը շուտափույթ կարգավորման կարիք ունեն, այլապես դեռևս երկար ժամանակ, որպես դատապարտյալների ուղղման արդյունավետ միջոց, կմնա սուկ ազատազրկումը:

ԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ

Բուստոնում օրենքի պահպանները կարող են պատասխանատվության ենթարկել նրանց, ովքեր քնուն են՝ առանց ցերեկային հագուստը հանելու, և նրանց, ովքեր թաղման արարողության գնալիս ձեռնոց են հագել:

Կալիֆորնիայում դիմակով դիմակահանդես գնալ ցանկացողը պետք է նախապես ստանա ոստիկանության թույլտվությունը:

Հոլիվուդում արգելվում է գլխավոր փողոցով քշել միաժամանակ ավելի քան երկու հագար ոչխար:

Վինչեստեր քաղաքում օրենքը թույլատրում է ճուպանի վրայով քայլել միայն եկեղեցում:

Ֆորդ-Մեդիսոնում (Այովայի նահանգ) հրշեջ խումբը, նախքան հրդեհի վայր մեկնելը, պետք է տասնհինգ րոպեի ընթացքում անցկացնի մարզում:

Ինդիանայում օրենքն արգելում է աղջկան սիրահետել անվաչմուշկներով սահքի ուսուցման պրոցեսում:

Դատավոր - Դա արդեն չլաված հանդգություն է: Սկզբում դուք մի պարոնից գողացել եք թանկարժեք մուշտակը, իսկ հետո մեկ ուրիշից՝ դրամապանակը...

Ամբաստանյալ - Ախր ես չեի կարող թանկարժեք մուշտակի մեջ լինել և փող չունենալ:

- Ամբաստանյալ, ասացեք ազնվաբար, որտե՞ղ եք դուք թաքցրել գողացած փողերը, և ձեր դատավճիռը բավականին կմեղմացվի:

- Դե գիտեք, պարոն դատավոր, դա արդեն մնան է իսկական շանտաժի:

- Մեղադրյալ, դուք ինչու՞ եք համառորեն ժխտում ձեր մեղքը: Ահա երկու վկաներ: Նրանք տեսել են, թե ինչպես դուք ավտոբուսում տուժողի գրպանից հանել եք ահա այս դրամապանակը:

- Լիովին հնարավոր է, պարոն դատավոր, բայց ես կարող եմ ցույց տալ տասը վկաների, որոնք այդ չեն տեսել:

Վկա - Խնդրում եմ, պարոն դատավոր, իմ գործը քննարկել դժվար է նիստում: Դատավոր - Ձեր ցուցմունքները այդքան նրբանկա՞տ են լինելու:

Վկա - Ոչ, բայց բաց դռներից այնպիսի միջանցիկ քամի է գալիս, իսկ ես ռևմատիզմով հիվանդ եմ

Սպանության փորձի վերաբերյալ գործով
Փաստաբան – Միջնորդում եմ կատարել էքսպերիմենտ, որպեսզի պարզենք, թե ամբաստանյալն ինչպես էր բռնել կացինը, որով հարված էր հասցրել տուժողի գլխին:

Դատախազ - Եթե էքսպերիմենտը կատարվի փաստաբանի գլխի մասնակցությամբ, ապա ես չեմ առարկի:

Պրոֆեսորը ընտանեկան իրավունք դասընթացից քննության ժամանակ հարցնում է ուսանողին.

- Ձեր կարծիքով, ամուսինն իրավունք ունի՞ր բացելու իր կնոջը հասցեագրված նամակը:

- Իրավունք, իհարկե, ունի, - պատասխանում է ուսանողը, - բայց դժվար թե նա այդքան համարձակություն ունենա:

Դատավոր -Դուք ավտոմեքենա եք գողացել: Ի՞նչ կարող եք ասել ձեզ արդարացնելու համար:

Ամբաստանյալ- Ես այն գտել եմ գերեզմանատանը և կարծել եմ, թե տերը մահացել է:

- Իսկ ինչու՞ դուք ձեր գտած մատանին չեք հանձնել գտանքների բյուրո, - հարցնում է դատավորը:

- Այդ ինչպե՞ս, - զարմանում է ամբաստանյալը, - չե՞ որ մատանու ներսում, ինքներդ կհամոզվեք, գրված է՝ «Հավերժ բունն է»:

«Խնդրում եմ, ողարկեք քննիչին՝ մասնավոր սեփականության հափշտակման գործին օգնության համար»:

(դիմումից)

«Նա սկսեց իմ գլուխը ոլորել, բայց դա նրան լավ չհաջողվեց: Այն ժամանակ նա սկսեց իր ձեռքերով աղաղակել իմ դեմքը»:

(բացատրականից)

«Հետախույզ շուն չի հրավիրվել՝ առկա չլինելու պատճառով»:

(ակտից)



Անասնապահերն աշխատանքի ժամանակ հարբում են, անասուններին թողնում առանց հսկողության և փչացնում ցանքերը՝ պատճառելով թեթև մարմնական վնասվածք: (ակտից)

Բ.-ի հարվածից ծովեց Ա.-ի ակնոցը՝ երկաթե շրջանակով, որի ձախ ապակու վրա կար քերծվածք, 5000 դրամ արժողությամբ: (արձանագրությունից)

Տրակտորիստ Դուկասը, լինելով հարբած վիճակում, արքնացավ դեկի վրա և, թռչելով փոսի վրայով, վնասեց տրակտորին: (արձանագրությունից)

Անվտանգության տեխնիկայի կանոնների կոպիտ խախտման հետևանքով արտադրող-ցուլի կողմից սպանվել է անասնապահ Ն.-ն: (որոշումից)

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Հեռ.՝ (374 10) 54-01-99

Ֆաքս՝ (374 10) 58-02-99

Էլ.փոստ՝ legalnewsletter@ayla.am

Լրատվական գործունեություն իրականացնող՝

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ

Հասցե՝ ք. Երևան,
Նալբանդյան 7, բն. 2

Պետական գրանցման վկայականի համարը՝
03Ա 057970, տրված՝ 27.12.2002 թ.

Թողարկման պատասխանատու և խմբագիր՝
Նարինե Կարապետյան

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ»
ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ

Տպաքանակը՝ 500 օրինակ
Ծավալը՝ 1 տպ. մամուլ
Ստորագրված է տպագրության
28.12.2006թ.

Տպագրվում է 2006թ. հունիսից